DiasporArm

EXPLORE . UNITE . EMPOWER

«DiasporArm»-ը ոչ առևտրային կազմակերպություն է, որ նպատակ ունի մոբիլիզացնել սփյուռքի ներուժը, համակարգել վերջինիս գործողությունները, աջակցել նախաձեռնություններին և ստեղծել սիներգիա ցանցային համագործակցության միջոցով՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության զարգացմանը և համայն հայության բարօրությանը:

DiasporArm-ի առաջնահերթ առաքելությունն է Սիդնեյից մինչև Լոս Անջելես բացահայտել յուրաքանչյուր հայ համայնքի տաղանդներին, նրանց կարողությունները և կենսական նշանակության կապերը: Այս նախաձեռնությունը ենթադրում է համագործակցություն տարբեր համայնքների, կազմակերպությունների, ասոցիացիաների և ՀՀ պետական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով կատարել Սփյուռքի քարտեզագրումը:

Դպրոցներ

- Ծանոթանալ դպրոցների ծրագրերին, ուսուցանվող լեզուներին, ուսանողների քանակին, հաջողություններին և բոլոր կարիքներին:
- Կիսվել նրանց հետ առկա ծրագրերով, դասավանդման նորարարական մեթոդներով, լավագույն փորձերով, գործիքներով, տեխնիկայով:
- Ներգրավել հիմնական կրթական շահագրգիռ կողմերին ստանդարտ ուսումնական ծրագիր մշակելու համար:
- Ստեղծել անհրաժեշտ միջոցներ՝ աջակցելու մեր հաստատություններին կրթելու և դաստիարակելու հայերի այնպիսի սերունդներ, որոնք կլինեն հասարակության հաջողակ և ազդեցիկ անդամներ՝ հարգված իրենց կրած արժեքների համար:

Օրինակ՝

ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան վարժարան

Երկիր՝ ԱՄՆ
Հասցե՝ 6844 Oakdale Ave, Canoga Park, CA 91306
Հիմնադրման տարի՝ 1976
Աշակերտություն՝ 973 ուսանող, 1605 շրջանավարտ
Կայք՝ https://agbumds.org/

Առաքելություն

ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան վարժարանը նախակրթարանից մինչև տասներկուերորդ դասարան ունեցող ուսումնական հաստատություն է, որը նպատակ ունի պահպանել և փոխանցել հայկական ժառանգությունը և խթանել ակադեմիական առաջադիմությունը: Դպրոցի նախապատրաստական ծրագիրը ոգեշնչում է ուսանողներին դառնալու քննադատական մտածողություն ունեցող մարդիկ, ովքեր գնահատում են իրենց հայկական ինքնությունն ու մշակույթը և պատրաստ են դիմակայելու աշխարհի անընդհատ փոփոխություններին:

Գրախանութներ, հրատարակչություններ և լրատվամիջոցներ (մեդիա)

- Ցուցակագրել գրախանութները, հեղինակներին և հրատարակչությունները, բոլոր հասանելի տպագիր, էլեկտրոնային և աուդիո գրքերը, հրատարակությունները, երաժշտական ստեղծագործությունները և տեսանյութերը:
- Դասակարգել վերը նշվածները ըստ լեզվի, թեմաների, տարեթվի, գտնվելու վայրի:
- Առաջարկել լոգիստիկ համակարգում Հայաստանի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի բաշխիչ կետերի հետ:

Օրինակ

VLUME-ը ամենամեծ և առաջատար հայկական թվային գրադարանն է, որը հնարավորություն է տալիս օգտատերերին կարդալ և լսել սիրած գրքերը իրենց էլեկտրոնային սարքերով: Ավելի քան 5 տարվա փորձ ունեցող հարյուրավոր էլեկտրոնային գրքերով և հազարավոր ժամեր տևող ձայնագրություններով հագեցած գրադարանը արդեն ձեռք է բերել հանրության սերն ու գովասանքը՝ շարունակելով մատչելի դարձնել գրականությունը: Ի լրումն Android-ի, iOS-ի և վեբ հավելվածների, VLUME-ի գործակցությունը Հյուսիսային Ամերիկայի, Հայաստանի դպրոցների և հանրային գրադարանների հետ, ինչպիսիք են Լոս Անջելեսի հանրային գրադարանը, Գլենդելի գրադարանային արվեստի ու մշակույթի կենտրոնը, Հայաստանի ազգային գրադարանը, թույլ են տալիս ավելի մեծ հանրային հասանելիություն հավելվածին: VLUME-ն առաջարկում է 12-ից ավել հրատարակիչների, որոնք ընդգրկում են ավելի քան 300 դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ: Հավելվածը ներկայացված է արևելահայերեն, արևմտահայերեն և անգլերեն լեզուներով: VLUME-ի գրադարանն ունի ավելի քան 1000 վերնագիր և 2500 ժամ տևող ձայնագրություն:

Կրոնական և մշակութային կենտրոններ, հաստատություններ, կազմակերպություններ և ասոցիացիաներ

- Բացահայտել նրանց առաջնային և երկրորդային առաքելությունները, ազդեցության մակարդակը (տեղական, տարածաշրջանային կամ համաշխարհային) և հասանելի տվյալները, ինչպիսին է տարեկան բյուջեն:

Օրինակ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)

Երկիր՝ ԱՄՆ
Հասցե՝ 149 Fifth Avenue Suite 500 New York, NY 10010 USA
Հիմնադրման տարի՝ 2003
Ազդեցության մակարդակ՝ համաշխարհային

Առաքելություն

Հզորացնել երեխաներին և երիտասարդներին Հայաստանի մարզերում՝ համապարփակ միջոցների և ՍՄԱՐԹ նորարարական նախաձեռնությունների միջոցով: ՔՈԱՖ-ը նպաստում է կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների և տնտեսական զարգացմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է Հայաստանում և հայերի համար կայուն, բարգավաճող և կենսունակ համայնքներ ունենալուն:

Նկարագրություն

2003 թվականից ի վեր ՔՈԱՖ-ն ավելի քան 100 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում է կատարել Հայաստանի զարգացման համար: Մինչ օրս ՔՈԱՖ-ը ծրագրեր է իրականացրել 6 մարզերի 82 գյուղերում, ինչպես նաև Արցախում: Այդ գյուղերում կրթության բարելավումն ու առողջապահության, ենթակառուցվածքների և տնտեսության զարգացումը ազդել է ավելի քան 107.239 շահառուների վրա: Առաջին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը, որը առաջադիմության և նորարարության կենտրոն է, բացվել է Լոռիում 2018 թվականին: Արմավիրի, Գորիսի և Կապանի ՍՄԱՐԹ կենտրոնները ստեղծման ճանապարհին են՝ նպատակ ունենալով առաջիկա 10 տարում ապահովել առնվազն 10 ՍՄԱՐԹ կենտրոնների առկայություն (յուրաքանչյուր մարզ առնվազն մեկ կենտրոն) և այդպիսով ընդգրկել ամբողջ Հայաստանը: Առաջիկա 10 տարիների ընթացքում Հայաստանում սպասվող ներդրումները կգերազանցեն 300 միլիոն ԱՄՆ դոլարը:

Տարեկան բյուջե (2023)	մոտ 10.8 միլիոն ԱՄՆ դոլար
Ծրագրեր և ենթակառուցվածներ	մոտ 93%
Վարչական և ղեկավարման ծախսեր՝	մոտ 7%

Ձեռնարկություններ, որոնք պատկանում են հայերին կամ ծառայություններ են մատուցում հայ համայնքներին

- Արդյունաբերության տեսակի, ապրանքների կամ ծառայությունների և առկայության դեպքում տվյալների (օրինակ եկամուտների) նույնականացում:

Օրինակ

BelPearl

Արտադրություն/մեծածախ վաճառք

Սեփականատեր՝ Փիէռ Հաճճար
Հիմնադրման տարի՝ 1933
Երկիր՝ Հոնկոնգ, համաշխարհային
Բնագավառ՝ զարդեր
Արտադրանք՝ մարգարիտներ
Գործունեություն՝ Արտադրություն/մեծածախ վաճառք
Մասնաճյուղեր՝ Ճապոնիա, Ինդոնեզիա, Սինգապուր, Բելգիա, Կանադա և ԱՄՆ
Կայք՝ https://www.belpearl.com/

Նկարագրություն

BelPearl-ը, որը հիմնադրվել է 1933 թվականին Սիրիայում, դարձել է նշանավոր դերակատար մարգարիտների համաշխարհային շուկայում՝ հայտնի դառնալով որակի նկատմամբ իր կայուն նվիրվածությամբ: «Որակի գերակայություն քանակի նկատմամբ» կարգախոսով ընկերությունն արտադրում է կատարելության հասնող բացառիկ մարգարիտներ:

Իր գործունեության ընթացքում BelPearl-ը նշանակալի հետք է թողել արդյունաբերության մեջ: Ընդլայնելով իր սահմանները՝ 1962 թվականին BelPearl-ը գրասենյակ բացեց Ճապոնիայի Կոբե քաղաքում՝ ամրապնդելով իր ներկայությունը ասիական շուկայում: Հատկանշական է, որ 1972 թվականին այն ձեռք բերեց չինական պետական մենաշնորհ՝ հիմնելով գրասենյակ Չինաստանի Գուանչժոու քաղաքում: 1990 թվականին պատվով բացվեց 150 հմուտ մասնագետներով համալրված մեծածավալ գործարանը:

Ազդեցիկ անհատներ. համայնքային առաջնորդներ և ազդեցիկ անդամներ (հայեր և ոչ հայեր, ովքեր ակտիվորեն ներգրավված են համայնքային կյանքում)

- Բացահայտել նրանց ազդեցության ոլորտները՝ կրթություն, գիտություն, առողջապահություն, քաղաքականություն, դիվանագիտություն, լրագրություն, մարդասիրություն և ձեռներեցություն:
- Բացահայտել նրանց ազդեցության մակարդակը (տեղական, տարածաշրջանային կամ համաշխարհային)

Օրինակ

Տիգրան Ավագյան

Երկիր՝ Ուկրանիա
Ծննդյան երկիր՝ Ուկրանիա
Լեզուներ ուկր., արլ., անգլ., ռուս., իտալ.
Ազդեցության ոլորտ՝ քաղաքագիտություն, անվտանգություն, կրթություն, մշակույթ
Զբաղեցրած պաշտոններ՝ Tigran Avakian LIVE-ի սեփականատեր

Երրորդ սերնդի ուկրանիահայ Տիգրան Ավագյանը միջազգային վերլուծաբան և խորհրդատու է՝ մասնագիտացած քաղաքագիտական և անվտանգային հարցերում: Ծնված լինելով 1975 թվականին, նա ավելի քան 15 տարի դասավանդում է աշխարհաքաղաքականություն և կոնֆլիկտաբանություն տարբեր համալսարաններում՝ միաժամանակ զբաղեցնելով մի շարք բարձրաստիճան պետական պաշտոններ՝ մասնավորապես Ուկրաինայի ներքին գործերի փոխնախարար եվրաինտեգրման հարցերով 2014-ից 2016 թթ.:
Ի լրումն իր ակադեմիական հաջողություններին՝ Ավագյանը մեծ դեր է ունեցել ռազմական բարեփոխումների ոլորտում և նշանակալի ներդրում է ունեցել ՆԱՏՕ-Ուկրանիա համագործակցության բարձրաստիճան հանդիպումներում, հատկապես որպես ՆԱՏՕ-Ուկրանիա բարձր մակարդակի ռազմական բարեփոխումների համատեղ աշխատանքային խմբի անդամ 2014թ. մինչև 2017թ.:
Տիգրան Ավագյանի մյուս ձեռքբերումներից են 20 գրքերի հեղինակումը, հայկական վեբկայքի (Հանրագիտարանի) ստեղծումը, Ղրիմի և Ուկրանիայի հայկական եկեղեցիների մասին ֆիլմի պատրաստումը, ինչպես նաև Ղրիմի ամենամեծ հին հայկական վանքի՝ Սուրբ Խաչի վերականգնման գործում ունեցած ակտիվ մասնակցությունը: Պարոն Ավագյանը նաև աշխատել է որպես Ուկրանիայի հայերի միության գործադիր տնօրեն:

Աղբյուր՝ https://ua.linkedin.com/in/tigran-dicran-avagyan-avakian-b7984421?trk=public_post_feed-actor-name

Ծրագրի նպատակներ

- Տեղեկատվությունը հասանելի դարձնել որոնման, ֆիլտրման և տեսակավորման հնարավորությամբ ըստ անհատների գործունեության, գտնվելու վայրի կամ մակարդակի. օրինակ կարողանալ փնտրել նանոտեխնոլոգիայի, կենսատեխնոլոգիայի, գրաբարի և այլ ճյուղերի՝ դոկտորական աստիճան ունեցող մասնագետներին, իրավաբաններին և այլ մասնագիտացում ունեցող անձանց:
- Խթանել համագործակցություն և համակարգում անհատների և կազմակերպությունների միջև, որոնք ունեն ընդհանուր տեսլական, արժեքներ և նպատակներ:
- <u>Ի վերջո, ծառայել ներգրավված կազմակերպությունների և համայնքների կարիքներին:</u>

Տվյալները բաժանված են 12 բնագավառների, ինչպես նշված է ստորև





Անվտանգություն
Կրթություն
Առողջապահություն
Շրջակա միջավայր
Մասնագիտական խմբեր
Իրավունք
Տեղեկատվական տեխնոլոգիաներ
Արդյունաբերություն
Ծառայություններ և առևտուր
Հյուրընկալություն և զբոսաշրջություն
Ազդեցիկ անհատներ
Կազմակերպություններ

Երկիր
Տարածաշրջան կամ նահանգ
Քաղաք
Իրավունք
Մասնագիտություններ
Կազմակերպություններ

Կարինե Կարապետյան
Դատավոր

Արսենյան Սարգիս
Պայմանագրերի Կազմման Գծով Իրավախորհրդատու

Արշակյան Հակոբ
Իրավախորհրդատու

Մեր խորհրդի անդամներն ու խորհրդատուները

Յովէլ Շնորհօքեան
Հիմնադիր, խորհրդատու

Պիեռ Աքքելէան
Նախաձեռնող

Կարօ Արմէն
Նախաձեռնող

Ցոլին Սարեան
Խորհրդատու

Սերժ Տէր Յակոբեան
Խորհրդատու

Սեպուհ Պաղտոյեան
Խորհրդատու

Արա Նահապետեան
Խորհրդատու

Մեր թիմը

Անահիտ Թորոսյան
Ծրագրերի համակարգող

Անի Հովհաննիսյան
Ծրագրերի համակարգող

Գարոլ Քէնտիրճեան
Ծրագրերի գծով օգնական

Նարէ Քիւսպէքեան
Դիզայներ

Աւետիս Ափոշեան
Թարգմանիչ (արևմտահայերեն)

Անտրես Եագուպեան
Թարգմանիչ (իսպաներեն)

Հասմիկ Տեր-Հարությունյան
Թարգմանիչ (ռուսերեն)

Հայկուհի Աղաբեկյան
Թարգմանիչ (ֆրանսերեն)

Սփյուռքահայերի կլոր սեղան

Հունիսի 18-19, 2022թ.
Փարիզ, Ֆրանսիա

Հանդիպում համահայկական կազմակերպությունների հետ՝ ՀԲԸՄ, ԱՀԱԸ, ՔՈԱՖ, ՀՕՖ, Ապագա հայկական և Թուֆենկյան հիմնադրամ:

Մայիսի 15, 2023թ.
Երևան, Հայաստան

Շնորհակալություն

Կոնտակտային հասցե

https://diasporarm.org/hye/

contact@diasporarm.org

DiasporArm

EXPLORE . UNITE . EMPOWER